

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
Թարգմանիչ հրավիրելու մասին

ք.Երևան

<< 16 >> հունվարի 2019թ.

Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Կենտրոնն և Նորք-Մարաշ վարչական շրջանների քննչական բաժնի ավագ քննիչ, առաջին դասի խորհրդական Տ.Գ.Մուրադյանս, վերանայելով ՀՀ ոստիկանության Կենտրոնական բաժնից ստացված թիվ 13963518 քրեական գործի նյութերը,

Պ Ա Ր Ձ Ե Ց Ի

2018 թվականի նոյեմբերի 15-ին՝ ժամը 18:20-ին, ոստիկանության Կենտրոնական բաժնում հաղորդում է տվել Մարիաննա Ռոբերտի Դավթյանն այն մասին, որ իր ծանոթ Ալբերտ Քալանթարյանը սույն թվականի նոյեմբերի 13-ին՝ ժամը 21:00-ի սահմաններում, Կորյուն 91/1 հասցեի մոտ իր հասցեին հնչեցրել է սպանության սպառնալիքներ:

Դեպքի առթիվ 2018 թվականի նոյեմբերի 26-ին ՀՀ ոստիկանության Կենտրոնական բաժնում հարուցվել է թիվ 13963518 քրեական գործը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 137-րդ հոդվածի 1-ին մասով, որը նախաքննություն կատարելու նպատակով ուղարկվել է ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Կենտրոնն և Նորք-Մարաշ վարչական շրջանների քննչական բաժին:

Նկատի ունենալով, որ նախաքննությամբ անհրաժեշտություն է առաջացել հարցաքննելու Մարիաննա Ռոբերտի Դավթյանին, վերջիններիս մասնակցությամբ կատարել մի շարք քննչական գործողություններ և կայացնել դատավարական որոշումներ, մինչդեռ վերջինս ոչ բավարար է տիրապետում հայերեն գրավոր և բանավոր լեզվին, այլ տիրապետում է ռուսերեն գրավոր և բանավոր լեզվին, ուստի անհրաժեշտ է քրեական գործով հրավիրել թարգմանիչ:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 15-րդ, 55-րդ և 83-րդ հոդվածներով.

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Թիվ 13963518 քրեական գործով հրավիրել <<Վի Գրուպ>> ՍՊ ընկերության թարգմանիչ Արինե Հարությունյանին (անձնագիր AN 0745803, տրված 09.12.2013թ., 001-ի կողմից), ով տիրապետում է հայերեն և ռուսերեն գրավոր և բանավոր լեզուներին:

Թարգմանչին բացատրել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածով նախատեսված նրա իրավունքներն ու պարտականությունները, ինչպես նաև նախազգուշացնել ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ և 339-րդ հոդվածներով նախատեսված պատասխանատվության մասին:

**Ավագ քննիչ,
առաջին դասի խորհրդական**



Տ.Գ. Մուրադյան

Ինձ բացատրված է որպես թարգմանիչ իմ իրավունքներն ու պարտականությունները: Միաժամանակ նախազգուշացված եմ ակնհայտ սուտ թարգմանության համար նախատեսված քրեական պատասխանատվության մասին:

Թարգմանիչ



Ա.Հարությունյան

Տեղեկանք
Թիվ 13963518 քրեական գործով

ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների քննչական բաժնում քննվող թիվ 13963518 քրեական գործով որպես թարգմանիչ Ներգրավված «Վի Գրուպ» ՍՊ ընկերության ներկայացուցիչ Արինե Հայկի Հարությունյանը քրեական գործով կատարել է հայերենից ռուսերեն և ռուսերենից հայերեն քանավոր թարգմանություններ ընդհանուրը 6 ժամ 05 րոպե տևողությամբ:

Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական
շրջանների քննչական բաժնի ավագ քննիչ,
առաջին դասի խորհրդական



Տ.Գ. Մուրադյան

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
Թարգմանիչ հրավիրելու մասին

<<10>> մայիսի 2019թ.

ք. Արմավիր

«Քննչական կոմիտեի Արմավիրի մարզային քննչական վարչության ՀԿԳ քննիչ, արդարադատության երրորդ դասի խորհրդական Բ.Կիրակոսյանս վերանայելով վարույթումս քննվող թիվ 65151819 քրեական գործի նյութերը՝

Պ Ա Ր Ձ Ե Ց Ի

2019թ. ապրիլի 10-ին՝ ժամը 17²⁰-ին, Արմավիրի մարզի Լեռնագոգ գյուղի բնակչուհի Ավգուստինա Ավակի Ալլախվերդովան ոստիկանության Բաղրամյանի բաժնում հաղորդում է տվել այն մասին, որ ս/թ-ի ապրիլի 10-ին՝ ժամը 14³⁰-ի սահմաններում, իրենց շքամուտքի դիմաց, կենցաղային հարցերի շուրջ ծագած վիճաբանության ժամանակ հարևանուհի Անժելա Գևորգի Ղուկասյանը բռնելով իր մազերից՝ քաշել, վայր է գցել, այնուհետև ձեռքով մեկ անգամ հարվածել է իր մոր՝ Էլմիրա Խաչատուրի Բաղրյանին, ով էլ վայր ընկնելով գետնին՝ դեմքի շրջանում ստացել է մարմնական վնասվածքներ:

Նյութերի նախապատրաստման ընթացքում պարզվել է, որ Ա.Ալլախվերդովան կենցաղային հարցերի շուրջ ծագած վիճաբանության ժամանակ Ա.Ղուկասյանի հետ փոխադարձ վիրավորական խոսքեր են հնչեցրել միմյանց հասցեի, որի ժամանակ Ա.Ղուկասյանը բռնելով Ա.Ալլախվերդովայի մազերից՝ գցել է գետնին: Այդ պահին նրանց բաժանել է մյուս հարևան Արամ Սամվելի Դավթյանը: Որոշ ժամանակ անց Ա.Ղուկասյանը կրկին անգամ հարձակվելով Ա.Ալլախվերդովայի վրա՝ բռունցքներով մի քանի անգամ հարվածներ է հասցրել նրան, պատճառելով՝ ֆիզիկական ցավ: Վիճաբանությանը փորձել է միջամտել նաև Ա.Ալլախվերդովայի մայր Է.Բաղրյանը, սակայն Ա.Ղուկասյանը ձեռքով բռնելով վերջինիս մազերից՝ մյուս ձեռքով հարվածել է նրա կրծքավանդակին, ինչի հետևանքով Է.Բաղրյանը կորցնելով մարմնի հավասարակշռությունը՝ վայր է ընկել և դեմքով հարվածելով գետնին՝ ստացել է մարմնական վնասվածքներ: Պարզվել է նաև, որ վիճաբանության ժամանակ Ա.Ալլախվերդովան և Է.Բաղրյանը նույնպես Ա.Ղուկասյանին գցել են գետնին, ձեռքերով և ոտքերով մի քանի հարվածներ են հասցրել վերջինիս, պատճառելով՝ ֆիզիկական ցավ:

Դեպքի առթիվ «Ոստիկանության Բաղրամյանի բաժնում 22.04.2019թ. «Քրեական օրենսգրքի 118-րդ հոդվածի հատկանիշներով հարուցվել է թիվ 65151819 քրեական գործը և այն ուղարկվել է «Քննչական կոմիտեի Արմավիրի մարզային քննչական վարչություն:

10.05.2019թ. որոշումներ են կայացվել Ավգուստինա Ալլախվերդովային և Էլմիրա Բաղրյանին որպես մեղադրյալ ներգրավելու մասին:

Պարզվել է, որ Ավգուստինա Ալլախվերդովան և Էլմիրա Բաղրյանը ոչ բավարար չափով են տիրապետում քրեական դատավարության լեզվին և տիրապետում ռուսերեն լեզվին:

Նկատի ունենալով, որ անհրաժեշտություն է առաջացել Ավգուստինա Ալլախվերդովային և էմիրա Բաղդյանին հնարավորություն ընձեռել թարգմանչի օգնությամբ իրականացնել քրեադատավարական օրենքով սահմանված իր իրավունքները, ուստի ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Քրեական դատավարության օրենսգրքի 15-րդ հոդվածով, 55-րդ հոդվածի 4-րդ մասի 12-րդ կետով և 83-րդ հոդվածով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1. Թիվ 65151819 քրեական գործով որպես թարգմանիչ հրավիրել Արինե Հայկի Հարությունյանին / ծնված՝ 29.01.1986թ., հաշվառված՝ Սյունիքի մարզ, քաղաք Կապան, Լեռնագործների փողոց, 1-ին շենք, բնականար 13 հասցեում, բնակվող՝ քաղաք Երևան, Սևաստոպոլյան փողոց, տուն՝ 20/2 հասցեում /, ով ազատորեն տիրապետում է հայերեն և ռուսերեն լեզուներին, ով գործով չչահագրգռված անձ է:

2. Որոշման մասին հայտնել թարգմանիչ Արինե Հարությունյանին, պարզաբանել «Քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածով նախատեսված նրա իրավունքներն ու պարտականությունները և նախազգուշացնել ակնհայտ սխալ թարգմանություն կատարելու համար «Քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով նախատեսված քրեական պատասխանատվության մասին :

Հ Կ Գ Ք Ն Ն Ի Չ՝

Ք. Կ Ի Ր Ա Կ Ո Ս Յ Ա Ն

Սույն որոշումն ինձ հայտնվել է: Ես նախազգուշացվել եմ ակնհայտ սխալ թարգմանություն կատարելու համար «Քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով նախատեսված քրեական պատասխանատվության մասին: Միաժամանակ ինձ պարզաբանվել են «Քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածով նախատեսված թարգմանչի իմ իրավունքներն ու պարտականությունները:

թարգմանիչի ստորագրությունը, ազգանունը

10 05 2019թ.

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

ք. Արմավիր

ՀՀ ՔԿ Արմավիրի մարզային քննչական վարչության ՀԿԳ քննիչ, արդարադատության 3-րդ դասի խորհրդական Բ.Կիրակոսյանս, կազմեցի սույն տեղեկանքն այն մասին, որ վարույթում քննված թիվ 65151819 քրեական գործով որպես թարգմանիչ ներգրավված «Վի Գրուպ» ՍՊ ընկերության թարգմանիչ Արինե Հայկի Հարությունյանը կատարել է հայերենից ռուսերեն և հակառակը բանավոր թարգմանություն 5 ժամ տևողությամբ:

Վարչության ՀԿԳ քննիչ,
արդարադատության երրորդ դասի
խորհրդական՝

հեռ. 077-11-08-78



Բ. Կիրակոսյան

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
քրեական գործով թարգմանիչ ներգրավելու մասին

26 մարտի 2019թ.

ք. Երևան

ՀՀ քննչական կոմիտեի ԵԲԲՎ Երևան քաղաքի Ավան և Նոր Նորք վարչական շրջանների քննչական բաժնի ավագ քննիչ, երրորդ դասի խորհրդական Գ.Խ.Հովհաննիսյանս, ուսումնասիրելով թիվ 17952518 քրեական գործի նյութերը,

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

2018թ.-ի դեկտեմբերի 9-ին ՀՀ ոստիկանության Նոր Նորքի բաժնին զեկուցագիր է ներկայացրել ՀՀ ոստիկանության ՊՊԳՎ Նոր Նորքի պահպանության բաժնի վաշտի ոստիկան, ոստիկանության ավագ՝ Խաչիկ Վաչագանի Հարությունյանն այն մասին, որ 08.12.2016թ.-ին՝ ժամը 22:30-ից ծառայություն է կատարել Բագրևանդ 98 հասցեում գործող «Ռայ» գիշերային ակումբում: 09.12.2018թ.-ին՝ ժամը 06:30-ի սահմաններում, գտնվել է պարասրահի բարի մոտ, որտեղից նկատել է, որ հաճախորդներից մեկը ցանկացել է պարուհիներից մեկի հետևից մտնել դրամարկղի սենյակ, որտեղ մուտքն արգելված է եղել, ինչի համար ինքը միջամտել է ու ներկայանալով որպես ծառայություն կատարող ոստիկան՝ տեղեկացրել է, որ չի կարելի դրամարկղի սենյակ մտնել, սակայն հաճախորդը սկսել է իր հասցեին անպարկեշտ արտահայտություններ հնչեցնել, քաշքշել է համազետից, այնուհետև միասին դուրս են եկել ակումբի բակ, որտեղ հաճախորդը վիճաբանության մեջ է մտել նաև ակումբի անվտանգության աշխատակից Դավիթ Մարտինի Եղիսյանի հետևից միջամտելով՝ ինքը կրկին փորձել է հանդարտեցնել հաճախորդին, սակայն վերջինս իր հասցեին հնչեցրել է սեռական բնույթի հայտյանքներ և բռունցքով հարվածել է իր դեմքին՝ պատճառելով ֆիզիկական ցավ և մարմնական վնասվածք, շարունակել է քաշքշել իրեն ու հնչեցնել սեռական բնույթի հայտյանքներ, իսկ այդ ընթացքում ինքը Դավիթ Եղիսյանի ականջի շրջանում նկատել է արյունահոսություն: Այնուհետև հաճախորդը նստել է «Կիա» մակնիշի 295LU67 հաշվառման համարանիշի ավտոմեքենան ու այն վարելով իրենց ուղղությամբ՝ հարվածել է ակումբի մուտքի դռանը՝ կոտրելով ապակին, ինչից հետո հետընթաց կատարելով՝ իջել է ավտոմեքենայից, կրկին քաշքշել իրեն և նստելով դիմացի մայթին կայանված մեկ այլ ավտոմեքենա հեռացել է:

Նույն օրը՝ ժամը 09:00-ին, ՀՀ ոստիկանության Նոր Նորքի բաժնում հաղորդում է տվել հիշյալ գիշերային ակբի տնօրեն Արթուր Գրիգորի Անդրեանն այն մասին, որ ակումբի մուտքի դռան ապակին կոտրելու հետևանքով պատճառվել է 200.000 ՀՀ դրամից 300.000 ՀՀ դրամի գույքային վնաս, սակայն չի բողոքել իրեն գույքային վնաս պատճառելու համար:

Բացի այդ, 2018թ. դեկտեմբերի 9-ին՝ ժամը 09:20-ին հաղորդում է տվել Դավիթ Եղինյանն այն մասին, որ հիշյալ միջադեպի ընթացքում նշված հաճախորդն իր ուղղությամբ նետել է օձանելիքի տարրա, ինչը դիպել է ձախ ականջի հետին մասին՝ վնասելով այն: Դավիթ Եղինյանը հայտնել է, որ բողոք չունի իրեն մարմնական վնասվածք պատճառելու կապակցությամբ:

Պարզվել է, որ նշված հաճախորդը հանդիսացել է Հովսեփ Հարությունի Ավետիսյանը, ով ինքնական ներկայացել է ոստիկանության Նոր Նորքի բաժին և խնդրել է իրեն տալ դատաբժշկական փորձաքննություն նշանակելու մասին որոշում: Վերջինս միևնույն ժամանակ հրաժարվել է վերոգրյալի կապակցությամբ հաղորդում և բացատրություն տալուց:

Դեպքի առթիվ 19.12.2018թ. ՀՀ ոստիկանության Նոր Նորքի բաժնում ՀՀ քրեական օրենսգրքի 118-րդ հոդվածով և 316-րդ հոդվածի 1-ին մասով հարուցվել է թիվ 17952518 քրեական գործը, որը նույն օրը ուղարկվել է ՀՀ քննչական կոմիտեի ԵԲԲՎ Երևան քաղաքի Ավան և Նոր Նորք վարչական շրջանների քննչական բաժին, որտեղ ստացվել է 27.12.2018թ., ընդունվել է վարույթ և կատարվում է նախաքննություն:

Քրեական գործի նախաքննության ընթացքում անհրաժեշտություն է առաջացել որպես վկա հարցաքննել Գուգալ Կարմաժանովայի Արդուումունովային, ով չի տիրապետում հայերեն գրավոր լեզվին, սակայն ազատորեն տիրապետում է ռուսերեն գրավոր և բանավոր լեզվին:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 15-րդ հոդվածի, 55-րդ հոդվածի 4-րդ մասի 12-րդ կետի և 83-րդ հոդվածների պահանջներով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1. Թիվ 17952518 քրեական գործով որպես թարգմանիչ հրավիրել «Վի Գրուպ» ՍՊԸ-ի թարգմանիչ Տաթևիկ Գուգարքի Քոչարյանին /ազատ տիրապետում է ռուսերեն և հայերեն լեզուներին, քրեական գործով չչահագրգռված անձ է/:
2. Տաթևիկ Գուգարքի Քոչարյանին պարզաբանել ՀՀ քր. դատ. օր-ի 83-րդ հոդվածով նախատեսված թարգմանիչի իրավունքներն ու պարտականությունները, ինչպես նաև նախազգուշացնել ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով նախատեսված պատասխանատվության մասին:

Ավագ քննիչ



Գ.Խ. Հովհաննիսյան

Ինձ պարզաբանվել են որպես թարգմանիչի՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածով նախատեսված իմ իրավունքներն ու պարտականությունները, միաժամանակ նախազգուշացվել եմ ակնհայտ սխալ թարգմանություն կատարելու համար ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով նախատեսված քրեական պատասխանատվության մասին:

Տ. Խաչատրյան

« 26 »

03

2019թ.

Տեղեկանք

ք. Երևան

26.03.2018թ.

Ես՝ ՀՀ ՔԿ ԵՔՔՎ Երևան քաղաքի Ավան և Նոր Նորք վարչական շրջանների քննչական բաժնի Ավագ քննիչ, երրորդ դասի խորհրդական Գ.Խ.Հովհաննիսյանս, սույն տեղեկանքը կազմում եմ այն մասին, որ «Վի Գրուպ» ՍՊԸ-ի թագման Տաթևիկ Գուգարքի Քոչարյանը 2019 թվականի մարտի 26-ին թիվ 17952518 քրեական գործով կատարված դատավարական գործողության ժամանակ ընդհանուր 4 ժամ կատարել է թարգմանություն հայերենից ռուսերեն և հակառակը:

Ավագ քննիչ



Գ.Խ.Հովհաննիսյան

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
թարգմանիչ ներգրավելու մասին

« 23 » փետրվարի 2019թ.

ք.Երևան

ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության ՃՏՀ քննության բաժնի ՀԿԳ քննիչ Արթուր Գասոյանս, վերանայելով վարույթիս թիվ 60172718 քրեական գործի նյութերը,

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

2018թ. հուլիսի 4-ին՝ ժամը 20.30-ի սահմաններում, Երևան քաղաքի Տիգրան Մեծ պողոտայում՝ «Տաշիր» առևտրի կենտրոնի ավտոկայանատեղիում, Գրիգորի Ռաշիդի Գրիգորյանն իր վարած «Օպել» մակնիշի, 27 XX 001 հ/հ ավտոմեքենայով վրաերթի է ենթարկել հետիոտներ Թագուհի Ռոբերտի Գաբրիելյանին և Ռուզաննա Ալիկի Մուսաեյանին, անզգուշությամբ պատճառել նրանց մարմնական վնասվածքներ, ովքեր տեղափոխվել են «Էրեբունի» բժշկական կենտրոն:

Նյութերի նախապատրաստման ընթացքում Թագուհի Գաբրիելյանը և Ռուզաննա Մուսաեյանը ավտովարորդ Գրիգորի Գրիգորյանին քրեական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ բողոք են ներկայացրել:

Դեպքի առթիվ 30.07.2018թ. ՀՀ ոստիկանության ՃՈ ՃՊԾ 1-ին սպայական գումարտակի ՃՏՊ գործերով հետաքննության և վարչական վարույթի իրականացման բաժանմունքում ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ հոդվածի 1-ին մասով հարուցվել է թիվ 60172718 քրեական գործը և նախաքննություն կատարելու համար ուղարկվել ՀՀ ՔԿ Երևան քաղաքի քննչական վարչության ՃՏՀ քննության բաժին: Նախաքննության ընթացքում պարզվել է, որ տուժող Թագուհի Գաբրիելյանը չի տիրապետում հայերեն գրավոր լեզվին:

Նկատի ունենալով, որ տուժող Թագուհի Գաբրիելյանը չի տիրապետում քրեական դատավարության լեզվին և տիրապետում է ռուսերեն գրավոր և բանավոր լեզվին, իսկ «Վի Գրուպ» ՍՊԸ թարգմանիչ Արինե Հայկի Հարությունյանը տիրապետում է ինչպես հայերեն, այնպես էլ ռուսերեն լեզուներին և կարող է կատարել թարգմանություններ հայերենից ռուսերեն և հակառակը, ուստի ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 55-րդ և 83-րդ հոդվածներով՝


Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Թիվ 60172718 քրեական գործով որպես թարգմանիչ հրավիրել «Վի Գրուպ» ՍՊԸ աշխատակից Արինե Հայկի Հարությունյանին /ծնված 04.12.1954թ., բարձրագույն կրթությամբ, բնակվում է ք.Երևան, Սևաստոպոլյան փողոց, 20/2 տուն, անձնագիր՝ AN0745803, տրվ. 09.12.2013թ., 001-ի կողմից/:

ՀԿԳ քննիչ  Ա. Գասոյան

Ինձ պարզաբանվել են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածով նախատեսված իմ իրավունքներն ու պարտականությունները, ինչպես նաև նախազգուշացվել եմ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 338-րդ հոդվածով նախատեսված պատասխանատվության մասին:

ՀԿԳ քննիչ

 Ա. Գասոյան

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

23.05.2019թ.

ք. Երևան

Տրվում է ներկայացնելու «Վի գրուպ» ՍՊ ընկերությանն այն մասին, որ թարգման Արինե Հարությունյանը ՀՀ ՔԿ Երևան քաղաքի քննչական վարչության ՃՏՀ քննության բաժնի վարույթում քննված թիվ 60172718 քրեական գործո կատարել է հայերենից ռուսերեն թարգմանություններ, որի ընդհանու ժամաքանակը կազմում է 3 ժամ 45 րոպե:

ՀԿԳ ՔՆՆԻԶ, ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ
ԵՐՐՈՐԴ ԴԱՍԻ ԽՈՐՀՐԴԱԿԱՆ



Ա. ԳԱՍՈՅԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
Թարգմանիչ ներգրավելու մասին

10 12 2018թ

ք. Աբովյան

ՀՀ ԶԿ Աբովյանի քննչական բաժնի քննիչ Վ.Մովսիսյանս, վերանայելով վարույթիս թիվ 20862818 քրեական գործի նյութերը,

Պ Ա Ր Ձ Ե Ց Ի

2018թ.-ի մայիս ամսից մինչև 2018թ.-ի նոյեմբերի 9-ը՝ ժամը 13.00-ն ընկած ժամանակահատվածում Աբովյան քաղաքի 2.Անդրանիկի 5 հասցեում գտնվող ավտոկայանատեղիում կայանված Մուհանադ Համուդի Ալսուլթանին պատկանող «Ցիտրոեն Ց3» մակնիշի 493507 հ/հ ավտոմեքենայի չկողպված սրահի դռները և շարժիչի ծածկոցը բացելու եղանակով անձը ուրիշի գույքի գաղտնի հափշտակություն կատարելու դիտավորությամբ գաղտնի հափշտակել է ձայնարկիչը, մարտկոցը, դռան դետալը, գազի հոսանքալարերը՝ պատճառելով ընդհանուր 200.000 ՀՀ դրամի նյութական վնաս:

Դեպքի առթիվ 19.11.2018թ. ՀՀ ոստիկանության Կոտայքի մարզային վարչության Կոտայքի բաժնում ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 1-ին մասով հարուցվել է թիվ 20862818 քրեական գործը, որը 23.11.2018թ. ստացվել է ՀՀ ԶԿ Կոտայքի մարզային քննչական վարչության Աբովյանի քննչական բաժնում, նույն օրը սույն քրեական գործը ընդունվել է վարույթ և կատարվում է նախաքննություն:

Նախաքննության ընթացքում պարզվել է, որ տուժող Մուհանադ Համուդի Ալսուլթանը չի տիրապետում հայերեն գրավոր և բանավոր լեզվին, այլ տիրապետում է արաբերեն բանավոր ու գրավոր լեզվին:

Նկատի ունենալով, որ նրա մասնակցությամբ անհրաժեշտ է կատարել դատավարական գործողություններ, որի համար անհրաժեշտ է գործին թարգման ներգրավել, ուստի ելնելով վերոգրյալից և Ղեկավարվելով ՀՀ քր. դատ. օր-ի 15 և 83 հոդվածների պահանջներով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1.Սույն քրեական գործով թարգմանիչ ներգրավել «Վի Գրուպ >> ընկերության թարգմանիչ Մարալ Մարտիրոսի Զաքարյանին, ով հավասարապես տիրապետում է հայերեն և արաբերեն լեզուներին:



2.Թարգմանին ծանոթացնել և պարզաբանել ՀՀ քր. դատ. օր-ի 83 հոդ. նախատեսված նրա իրավունքներն ու պարտականությունները, միաժամանակ նախազգուշացնել ակնհայտ սխալ թարգմանություն կատարելու համար ՀՀ քր. օր-ի 338 հոդ. նախատեսված քրեական պատասխանատվության մասին:

ՔՆՆԻՉ

Վ.Մովսիսյան

Որոշմանը ծանոթացել եմ, իմ իրավունքներն ու պարտականությունները բացատրվել են, նախազգուշացվել եմ ակնհայտ սխալ թարգմանություն կատարելու համար նախատեսված քրեական պատասխանատվության մասին:

Թարգմանի


Վ. Մովսիսյան

Վեբեիշ


ՏԵՂԵԿԱԼԸ

29 դեկտեմբերի 2018թ.

ք.Արուսյան

ՀՀ քննչական կոմիտեի Կոտայքի մարզային քննչական վարչության Արուսյանի քննչական բաժնում քննվող թիվ 20862818 քրեական գործով «ՎԳՐՈՒՊ» ՍՊ ընկերության թարգմանիչ՝ Մարալ Մարտիրոսի Չաքարյան քրեական գործով ներգրավվել է որպես թարգմանիչ և կատարել թարգմանություն 19 ժամ:

Քննիչ՝



Վ.Ռ. Մոլսիսյան

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
թարգման ներգրավելու մասին

09.10.2018թ

ք. Հրազդան

«ՀՀ Կոտայքի մարզային քննչական վարչության ավագ քննիչ Ա.Ղու մաշյանս, քննարկելով վարույթիս թիվ 49163018 քրեական գործի նյութերը.

Պ Ա Ր Ձ Ե Ց Ի

Որ քաղաքացի Անտոն Սերգեևիչ Լոգինով ներկայացած անձը՝ բանկոմատից դրամական արժեքներ գաղտնի հափշտակելու դիտավորությամբ, 2018թ. օգոստոսի 18-ին՝ ժամը 03:25-ի սահմաններում եկել է Հրազդան քաղաք և «Կոնվերս բանկ», ՓԲԸ-ի Հրազդան քաղաքի Միկրոշրջան թաղամասի 104 շենքի 1-ին հարկում գտնվող մասնաճյուղի բանկոմատից գումարի տրամադրման դեռևս չչարգաված եղանակով, փորձել է գաղտնի հափշտակել առանձնապես խոշոր չափի՝ 9.600.000 ՀՀ դրամ գումար, սակայն իր հանցավոր մտադրությունը չի կարողացել ավարտին հասցնել իր կամքից անկախ հանգամանքներով, բանկոմատից դեռևս գումարները հանելիս, ահազանգով երբ իրեն են մոտեցել ոստիկանության աշխատակիցները, բանկոմատի գումարի տրաման դարակում թողնելով բանկոմատից դուրս եկող 800.000 ՀՀ դրամը, արդեն հանված և պայուսակի մեջ գտնվող 8.800.000 ՀՀ դրամ գումարը ձեռքին դիմել է փախուստի, սակայն ոստիկանության աշխատակիցները վերջինիս հետապնդելով՝ Միկրոշրջանի 104 շենքի վերջնամասում նրան բռնել և բերման են ենթարկել ոստիկանության բաժին, որտեղ վերջինիս խուզարկությամբ՝ ձեռքի պայուսակից հայտնաբերվել է բանկոմատից հափշտակված 8.800.000 ՀՀ դրամ գումարը:

Դեպքի փաստով 2018թ. օգոստոսի 18-ին ոստիկանության Հրազդանի բաժնի կողմից ՀՀ քրեական օրենսգրքի 34-177-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի հատկանիշով հարուցվել է թիվ 49163018 քրեական գործը, որը նույն օրը ուղարկվել է Կոտայքի մարզային քննչական վարչություն և ընդունվել վարույթ:

2018թ. օգոստոսի 18-ին ժամը 06:25-ին Անտոն Լոգինովը ձերբակալվել է:

20.08.2018թ. Անտոն Սերգեևիչ Լոգինովին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 34-177-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, նույն օրը վերջինիս նկատմամբ Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի կողմից որպես խափանման միջոց է ընտրվել կալանավորումը:

Նկատի ունենալով, որ մեղադրյալ Անտոն Սերգեևիչ Լոգինովը Որ քաղաքացի է, չի տիրապետում ՀՀ քրեական դատավարության լեզվին, ուստի անհրաժեշտ է նրան հնարավորություն ընձեռել թարգմանի օգնությամբ իրականացնելու օրենքով սահմանված իր իրավունքները:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 15-րդ, 55-րդ հոդվածներով

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Թիվ 49163018 քրեական գործով որպես թարգման ներգրավել՝

Արմեն Գրիգորյան
Ա. Գրիգորյան

և պարզաբանել

ՀՀ քր. դատ. օր.-ի 83 հոդ. նախատեսված թարգմանի իրավունքներն ու պարտականությունները, ինչպես նաև նախագգուշացնել ՀՀ քր. օր.-ի 338 հոդ. ակնհայտ սխալ թարգմանություն կատարելու համար նախատեսված պատասխանատվության մասին:

Ավագ քննիչ

Ա. Ղու մաշյան

Ա.Ղու մաշյան

Ինձ պարզաբանվել է ՀՀ քր.դատ. օր.-ի 83 հոդ.նախատեսված թարգմանի իմ իրավունքները և պարտականությունները, ինչպես նաև նախագգուշացվել ՀՀ քր.օր.-ի 338 հոդ. ակնհայտ սխալ թարգմանություն կատարելու համար նախատեսված պատասխանատվության մասին:


Թարգման՝

Արմեն Գրիգորյան

ՏԵՂԵԿԱՆՔ

ՀՀ ՔԿ ՀԿԳ քննության գլխավոր վարչության կոռուպցիոն, սեփականության դեմ ուղղված հանցագործությունների և կիբեռհանցագործությունների քննության վարչության ՀԿԳ ավագ քննիչ Թ. Նալբանդյանս, կազմեցի սույն տեղեկանքն այն մասին, որ վարույթունս քննված թիվ 49163018 քրեական գործով որպես թարգմանիչ ներգրավված «Վի Գրուպ» ՍՊ ընկերության թարգմանիչ Անուշ Խանիկյանը կատարել է հայերենից ռուսերեն և հակառակը բանավոր թարգմանություն 38ժ 50 րոպե տևողությամբ և գրավոր թարգմանություն հայերենից ռուսերեն՝ 212,996 միջ:

ՀԿԳ ավագ քննիչ



Թ. Նալբանդյան

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
թարգմանիչ հրավիրելու մասին

<<14>> հուլիսի 2019թ.

ք. Երևան

«ՔԿ ԵՔՔՎ Շենգավիթ վարչական շրջանի քննչական բաժնի ՀԿԳ քննիչ՝ Ն. Մուրադյանս, քննարկելով վարույթիս թիվ 58202019 քրեական գործի նյութերը,

Պ Ա Ր Ձ Ե Ց Ի

Շենգավիթ վարչական շրջանի քննչական բաժնում քննվող թիվ 58202019 քրեական գործի քննությանը պարզվել է, որ մեղադրյալ Ռանդիպ Կաուր Սուկիդև Գհարուն չի տիրապետում հայերեն գրավոր և բանավոր լեզվին, այլ խոսում և գրում է հնդկերեն լեզվով, իսկ վերջինիս հետ քննչական գործողություններ կատարելու համար պարտադիր պայման է համապատասխան թարգմանչի մասնակցությունը, ուստի ղեկավարվելով «Քրեական դատավարության օրենսգրքի 55-րդ, 83-րդ հոդվածի պահանջներով.

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1. Վարույթիս թիվ 58202019 քրեական գործով որպես թարգմանիչ հրավիրել հնդկերեն լեզվին գրավոր և բանավոր ազատորեն տիրապետող, «Վի Գրուպ» ՍՊԸ-ի աշխատակից Մանիկ Աչարյանին, որը սույն գործով հանդիսանում է չչափազրգույն անձ:

2. Որոշման մասին հայտնել Մ.Աչարյանին՝ բացատրելով «Քր. դատ. օր-ի 83 հոդվածով նախատեսված նրա իրավունքներն ու պարտականությունները, միաժամանակ նախազգուշացնել ակնհայտ սխալ թարգմանություն կատարելու համար «Քր. օր-ի 338 հոդվածով նախատեսված քրեական պատասխանատվության մասին:

~~ՀԿԳ քննիչ՝~~  ~~Ն. Մուրադյան~~

Ծանոթացա որոշմանը, ինձ պարզաբանվեց «Քր.դատ. օր-ի 83 հոդվածով նախատեսված իմ իրավունքներն ու պարտականությունները, ինչպես նաև նախազգուշացվել եմ ակնհայտ սխալ թարգմանություն կատարելու համար «Քր. օր-ի 338 հոդվածով նախատեսված քրեական պատասխանատվության մասին:

Թարգմանիչ՝


Մ.Աչարյան

<<14>> հուլիսի 2019թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
թարգմանիչ հրավիրելու մասին

<<20>> հուլիսի 2019թ.

ք. Երևան

ՀՀ ՔԿ ԵՔՔՎ Շենգավիթ վարչական շրջանի քննչական բաժնի ՀԿԳ քննիչ՝ Ն. Մուրադյանս, քննարկելով վարույթիս թիվ 58202019 քրեական գործի նյութերը,

Պ Ա Ր Ձ Ե Ց Ի

Շենգավիթ վարչական շրջանի քննչական բաժնում քննվող թիվ 58202019 քրեական գործի քննությամբ պարզվել է, որ մեղադրյալ Գուրպրիտ Սինգիին չի տիրապետում հայերեն գրավոր և բանավոր լեզվին, այլ խոսում և գրում է հնդկերեն լեզվով, իսկ վերջինիս հետ քննչական գործողություններ կատարելու համար պարտադիր պայման է համապատասխան թարգմանչի մասնակցությունը, ուստի ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 55-րդ, 83-րդ հոդվածի պահանջներով.

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1. Վարույթիս թիվ 58202019 քրեական գործով որպես թարգմանիչ հրավիրել հնդկերեն լեզվին գրավոր և բանավոր ազատորեն տիրապետող, <<Վի Գրուպ>> ՍՊԸ-ի աշխատակից Մանիկ Աչարյանին, որը սույն գործով հանդիսանում է չչահագրգռված անձ:

2. Որոշման մասին հայտնել Մ.Աչարյանին՝ բացատրելով ՀՀ քր. դատ. օր-ի 83 հոդվածով նախատեսված նրա իրավունքներն ու պարտականությունները, միաժամանակ նախազգուշացնել ակնհայտ սխալ թարգմանություն կատարելու համար ՀՀ քր. օր-ի 338 հոդվածով նախատեսված քրեական պատասխանատվության մասին:

ՀԿԳ քննիչ

Ն.Մուրադյան



Ծանոթացա որոշմանը, ինձ պարզաբանվեց ՀՀ քր.դատ. օր-ի 83 հոդվածով նախատեսված իմ իրավունքներն ու պարտականությունները, ինչպես նաև նախազգուշացվել եմ ակնհայտ սխալ թարգմանություն կատարելու համար ՀՀ քր. օր-ի 338 հոդվածով նախատեսված քրեական պատասխանատվության մասին:

Թարգմանիչ՝


Մ.Աչարյան

<<20>> հուլիսի 2019թ.

Տեղեկանք

<<15>> հուլիսի 2019թ.


ք. Երևան

Տրվում է Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Շենգավիթ վարչական շրջանի քննչական բաժնում քննվող թիվ 58202019 քրեական գործով որպես թարգման ճանաչված, <<Վի Գրուպ>> ՍՊԸ թարգմանիչ Մանիկ Հենրիկի Աչարյանին առ այն, որ նա սույն քրեական գործով 14.07.2019թ. և 15.07.2019թ. մասնակցել է մեղադրյալի հարցաքննությանը և կատարել է հայերենից հնդկերեն և հնդկերենից հայերեն թարգմանություն: /Ընդհանուրը՝ 2 ժամ տևողությամբ/:

Սույն տեղեկանքը կազմվեց երկու օրինակից, որից մեկը հանձնվեց թարգմանին, իսկ մյուսը կցվեց վարույթին:

~~ՀԿԳ քննիչ~~

~~Ն.Գ.Մուրադյան~~



Թարգմանիչ

[Signature]

Մ. Աչարյան

<<15>> հուլիսի 2019թ.

Տեղեկանք

<<20>> հուլիսի 2019թ.

ք. Երևան

Տրվում է Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Շենգավիթ վարչական շրջանի քննչական բաժնում քննվող թիվ 58202019 քրեական գործով որպես թարգման ճանաչված, <<Վի Գրուպ>> ՍՊԸ թարգմանիչ Մանիկ Հենրիկի Աչարյանին առ այն, որ նա սույն քրեական գործով 20.07.2019թ. մասնակցել է մեղադրյալի հարցաքննությանը, վերջինիս մասնակցությամբ կատարված գործողություններին և կատարել է հայերենից հնդկերեն և հնդկերենից հայերեն թարգմանություն: /Ընդհանուրը՝ 3 ժամ տևողությամբ/:

Սույն տեղեկանքը կազմվեց երկու օրինակից, որից մեկը հանձնվեց թարգմանին, իսկ մյուսը կցվեց վարույթին:

~~ՀԿԳ քննիչ Ե.Ղ.Մուրադյան~~



Ո Ր Ո Շ ՈՒ Մ
Թարգմանիչ հրավիրելու մասին

«18» հունվարի 2019թ.

ք.Երևան

«Քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների քննչական բաժնի ավագ քննիչ, երկրորդ դասի խորհրդական Գ.Վ.Հովհաննիսյանս, վերանայելով վարույթիս թիվ 12185318 քրեական գործի նյութերը՝

ՊԱՐԶԵՑԻ

2018 թվականի օգոստոսի 14-ին հնտերպալ Սինգը Երևան քաղաքի Տիգրան Մեծ պողոտայի 13/3 հասցեում գտնվող Սինգ հյուրանոցում՝ Հնդկաստանի քաղաքացիներ Նավին Բալդիվի Ռաջ Կումար Կաշիապինին, Ջավեդ Ահիշան Ալիինին և Աբիշեկ Ռաջ Կումարինին ժամանակավոր կացության քարտեր հանելու պատրվակով յուրաքանչյուրից խաբեությամբ վերցրել է 724.545 ՀՀ դրամ գումարին համարժեք 1.500 ԱՄՆ դոլար գումար, սակայն այդ ուղղությամբ որևէ գործողություն չկատարելով հափշտակել է նշված գումարները, վերջիններիս պատճառելով խոշոր չափերի՝ 2.173.635 ՀՀ դրամ ընդհանու արժողության գույքային վնաս:

Դեպքի առթիվ 2018 թվականի նոյեմբերի 29-ին ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով հարուցվել է թիվ 12885318 քրեական գործը:

Բացի այդ, 2018 թվականի սեպտեմբերի 17-ին հնտերպալ Սինգը Երևան քաղաքի Տիգրան Մեծ պողոտայի 13/3 հասցեում գտնվող Սինգ հյուրանոցում՝ Հնդկաստանի քաղաքացի Գուրվինդեր Գուրջանի Սինգին ժամանակավոր կացության քարտ հանելու պատրվակով նրանից խաբեությամբ վերցրել է 727.740 ՀՀ դրամ գումարին համարժեք 1.500 ԱՄՆ դոլար գումար, սակայն այդ ուղղությամբ որևէ գործողություն չկատարելով հափշտակել է նշված գումարը, վերջինիս պատճառելով խոշոր չափերի՝ 727.740 ՀՀ դրամ ընդհանուր արժողության գույքային վնաս:

Դեպքի առթիվ 2018 թվականի նոյեմբերի 30-ին ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով հարուցվել է թիվ 12885718 քրեական գործը:


2018 թվականի դեկտեմբերի 3-ին որոշում է կայացվել է թիվ 12885718 քրեական գործը թիվ 12885318 քրեական գործին միացնելու մասին:

Նկատի ունենալով, որ քրեական գործով անհրաժեշտ է հարցաքննել Ջավեդ Ալիին, Նացին Կումարին, Աբիշեկին, հնտերպալ Սինգին, Ռավինդերի Կումարին և Գուրվինդեր Սինգին, ովքեր չեն տիրապետում հայերեն գրավոր և բանավոր լեզվին, այլ տիրապետում են հնդկերեն գրավոր և բանավոր լեզվին, իսկ «Վի Գրուպ» ՍՊ ընկերության կողմից լիազորված Մանիկ Հենրիկի Աչարյան ազատորեն տիրապետում է հայերեն և հնդկերեն գրավոր և բանավոր լեզուներին, ունի բարձրագույն կրթություն, շահագրգռված չէ քրեական գործով, ուստի ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քր. դատ. օր.-ի 15-րդ, 55-րդ և 83-րդ հոդվածի պահանջներով.

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1. Թիվ 12885318 քրեական գործով «Վի Գրուպ» ՍՊ ընկերության կողմից լիազորված Մանիկ Հենրիկի Աչարյային հրավիրել որպես թարգմանիչ մասնակցելու գործի քննությանը և նրան ծանոթացնել ՀՀ քր. դատ. օր.-ի 83 հոդվածով նախատեսված թարգմանիչի իրավունքների և պարտականությունների հետ:

Ավագ Քննիչ



Գ.Վ.Հովհաննիսյան

Ինձ պարզաբանվել է որպես թարգմանիչ՝ ՀՀ քր.դատ. օր.-ի 83 հոդ. նախատեսված իմ իրավունքներն ու պարտականությունները, ծանոթացել եմ դրանց, նախազգուշացվել եմ ակնհայտ սխալ թարգմանություն կատարելու համար ՀՀ քր. օր.-ի 338 հոդվածով նախատեսված քրեական պատասխանատվության մասին:

« 18 » 01 2019թ.

Թարգման՝ Մ.Հ. Աչարյա



Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների քննչական բաժնի ավագ քննիչ, երկրորդ դասի խորհրդական Գ.Վ.Հովհաննիսյան, կազմեցի սույն տեղեկանքն այն մասին, որ վարույթում քննված թիվ 12885318 քրեական գործով «Վի Գրուպ» ընկերության կողմից լիազորված հնդկերեն լեզվի թարգմանչուհի Մանիկ Հենրիկի Աչարյան նախաքննության ընթացքում կատարել է 14 ժամ տևողությամբ թարգմանություն՝ հայերենից հնդկերեն և հակառակը:

ՀՀ ՔԿ ԵՔՔՎ Էրեբունի և Նուբարաշեն վարչական
շրջանների քննչական բաժնի ավագ քննիչ,
երկրորդ դասի խորհրդական՝



Գ.Վ.Հովհաննիսյան

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
Թարգմանիչ հրավիրելու մասին

«14» մարտի 2019թ.

ք.Երևան

ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Արաբկիր վարչական շրջանի քննչական բաժնի քննիչ Ս.Տոնոյանս, վերանայելով վարույթումս քննվող թիվ 14168119 քրեական գործի նյութերը.

Պ Ա Ր Ձ Ե Ց Ի՝

2019թ. հունվարի 14-ին ժամը 14:10-ի սահմաններում Փափազյան 8 հասցեում գտնվող «Ռիո Մոլ» առևտրի կենտրոնում գործող «Ամերիաբանկ» ՓԲԸ-ի մասնաճյուղում Սատման Սատմանը նշված մասնաճյուղում ներկայացրել է 100 ԱՄՆ դոլար անվանական արժեքով կեղծ թղթադրամ, որի վերաբերյալ բանկի համապատասխան աշխատակիցը ՀՀ ոստիկանության Արաբկիրի բաժնում հաղորդում է տվել:

Դեպքի առթիվ ՀՀ ոստիկանության ԵՔՎ Արաբկիրի բաժնում 13.02.2019թ. ՀՀ քրեական օրենսգրքի 34-177-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի հատկանիշներով հարուցվել է թիվ 14168119 քրեական գործը:

15.02.2019թ. թիվ 14168119 քրեական գործը ստացվել է Արաբկիր վարչական շրջանի քննչական բաժին և նույն օրը ընդունվել


Քննությամբ պարզվել է, որ դատավարական մասնակիցները չեն տիրապետում հայերեն գրավոր և բանավոր լեզվին և տիրապետում են հնդկերեն գրավոր և բանավոր լեզվին:

Նկատի ունենալով, որ դատավարական մասնակիցները չեն տիրապետում հայերեն գրավոր և բանավոր խոսքին, իսկ Մանիկ Աչարյան ազատորեն տիրապետում է հնդկերեն և հայերեն գրավոր և բանավոր լեզվին, շահագրգռված չէ գործի ելքով, ուստի ելնելով վերոգրյալներից և ղեկավարվելով ՀՀ քր. դատ. օր-ի 15-րդ և 83-րդ հոդվածներով.

Ո Ր Ո Շ Ե Ց Ի՝

1. Թիվ 14168119 քրեական գործով <<Վի Գրուպ>> ՍՊԸ թարգմանիչ Մանիկ Հենրիկի Աչարյանին ներգրավվել որպես թարգմանիչ, նրան պարգաբանել ՀՀ քր. դատ. օր-ի 83 հոդվածով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները և նախազգուշացնել ՀՀ քր. օր-ի 338 հոդվածով նախատեսված պատասխանատվության մասին:


Քննիչ՝



S.Տոնոյան

Ծանոթացա որոշմանը, ինձ պարգաբանվել են իմ իրավունքներն ու պարտականությունները:

Թարգմանիչ՝



Մ.Աչարյա

ՏԵՂԵԿԱՆՔ

ՀՀ Քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության արաբկիր վարչական շրջանի քննչական բաժնի քննիչ Ս.Տոնոյանս կազմեցի սույն տեղեկանքը այն մասին , որ վարույթումս քննվող թիվ 14168119 քրեական գործով <Վի Գրուպ ՍՊԸ> ընկերության կողմից լիազորված հնդկերեն լեզվի թարգմանչուհի Մանիկ Հենրիկի Աչարյան կատարել է բանավոր թարգմանություն հնդկերենից հայերեն և հակառակը ընդհանուր 12 ժամ 30 րոպե թարգմանություն:

ՀՀ ՔԿ ԵՔՔՎ Արաբկիր վարչական
շրջանների քննչական բաժնի քննիչ՝



Ս.Տոնոյան

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
Թարգմանիչ ներգրավելու մասին

07 դեկտեմբերի 2018թ.

ք.Երևան

ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության ՃՏՀ քննության բաժնի ՀԿԳ քննիչ, արդարադատության երրորդ դասի խորհրդական Վ.Սարգսյանս, վերանայելով վարույթի թիվ 60172818 քրեական գործի նյութերը,

Պ Ա Ր Ձ Ե Ց Ի՝

2018 թվականի հուլիսի 13-ին՝ քաղաքացի Ավարդ Միխայիլի Առաքելյանը հաղորդում է տվել այն մասին, որ 2018 թվականի մայիսի 1-ին՝ ժամը 13:00-ի սահմաններում, Երևան քաղաքի Ա.Տարոնցի փողոցում, /Բագրատունյաց 4-րդ նրբ., 172 դիմաց/ գտնվող շինանյութի խանութի մոտ ավտովարորդ Գավրիլ Հայկազի Թոխունցը իր կողմից վարած «Օպել» մակնիշի, 35 CF 364 հ/հ ավտոմեքենայով վրաերթի է ենթարկել իրեն, ինչի հետևանքով ինքը ստացած մարմնական վնասվածքներով տեղափոխվել է «Վնասվածքաբանության և Օրթոպեդիայի» գիտական կենտրոն:

Համաձայն ստացված դատաբժշկական փորձաքննության թիվ 1935/հ եզրակացության Ա.Առաքելյանի առողջությանը պատճառվել է ծանր վնաս:

Ա.Առաքելյանը իրեն վրաերթի ենթարկած ավտոմեքենայի վարորդ Գ.Թոխունցի դեմ բողոք է ներկայացրել և ցանկացել է, որ նա ենթարկվի քրեական պատասխանատվության:

Դեպքի առթիվ ՀՀ ՈՍ ՃՈ ծառայությունում 31.07.2018թ.-ին ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ հոդվածի 1-ին մասով հարուցվել է թիվ 60172818 քրեական գործը, որը նախաքննություն կատարելու համար նույն օրը ստացվել է Երևան քաղաքի քննչական վարչության ՃՏՀ քննության բաժնում, որի նախաքննության կատարումը հանձնարարվել է ինձ, կատարվում է նախաքննություն:

Քրեական գործի նախաքննության ընթացքում պարզվել է, որ Գավրիլ Հայկազի Թոխունցը ազգությամբ հայ է, տիրապետում է հայերեն բանավոր լեզվին, սակայն հայերեն գրավոր լեզվին չի տիրապետում, պատշաճ կերպով տիրապետում է ռուսերեն լեզվին, ուստի անհրաժեշտ է հնարավորություն ընձեռնել նրան թարգմանչի օգնությամբ իրականացնել քրեադատավարական օրենքով սահմանված իր իրավունքները և պարտականությունները:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի, 15-րդ, 55-րդ և 83-րդ հոդվածների պահանջներով,

Ո Ր Ո Շ Ե Ց Ի՝

1. Վարույթի թիվ 60172818 քրեական գործով որպես թարգմանիչ ներգրավել «Վի Գրուպ» ՍՊԸ-ի թարգմանիչ՝ Տաթևիկ Գուգարքի Քոչարյանին և վերջինիս բացատրել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածով նախատեսված թարգմանչի իրավունքները և պարտականությունները:
2. Տ.Քոչարյանին նախազգուշացնել ակնհայտ սխալ թարգմանություն կատարելու համար ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով նախատեսված քրեական պատասխանատվության մասին:

ՀԿԳ ՔՆՆԻՉ՝

Վ.Սարգսյան

Ինձ պարզաբանվել են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածով նախատեսված թարգմանչի իրավունքները և պարտականությունները, որոնք ինձ պարզ են և հասկանալի՝

Տ.Գ.Քոչարյան

08.12.

2018թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
թարգմանիչ ներգրավելու մասին

21 օգոստոսի 2018թ.

ք.Երևան

ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության ՃՏՀ քննության բաժնի ՀԿԳ քննիչ՝ Ա.Համզոյանս, վերանայելով վարույթի թիվ 60172818 քրեական գործի նյութերը,

Պ Ա Ր Ձ Ե Ց Ի՝

2018 թվականի հուլիսի 13-ին՝ քաղաքացի Ավարդ Միխայիլի Առաքելյանը հաղորդում է տվել այն մասին, որ 2018 թվականի մայիսի 1-ին՝ ժամը 13:00-ի սահմաններում, Երևան քաղաքի Ս.Տարոնցի փողոցում, /Բագրատունյաց 4-րդ նրբ., 172 դիմաց/ գտնվող շինանյութի խանութի մոտ ավտովարորդ Գավրիլ Հայկազի Թոխունցը իր կողմից վարած «Օպել» մակնիշի, 35 CF 364 հ/հ ավտոմեքենայով վրաերթի է ենթարկել իրեն, ինչի հետևանքով ինքը ստացած մարմնական վնասվածքներով տեղափոխվել է «Վնասվածքաբանության և Օրթոպեդիայի» գիտական կենտրոն:

Համաձայն ստացված դատաբժշկական փորձաքննության թիվ 1935/հ եզրակացության Ա.Առաքելյանի առողջությանը պատճառվել է ծանր վնաս:

Ա.Առաքելյանը իրեն վրաերթի ենթարկած ավտոմեքենայի վարորդ Գ.Թոխունցի դեմ բողոք է ներկայացրել և ցանկացել է, որ նա ենթարկվի քրեական պատասխանատվության:

Դեպքի առթիվ ՀՀ ՈՍ ՃՈ ծառայությունում 31.07.2018թ.-ին ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ հոդվածի 1-ին մասով հարուցվել է թիվ 60172818 քրեական գործը, որը նախաքննություն կատարելու համար նույն օրը ստացվել է Երևան քաղաքի քննչական վարչության ՃՏՀ քննության բաժնում, որի նախաքննության կատարումը հանձնարարվել է ինձ, կատարվում է նախաքննություն:


Քրեական գործի նախաքննության ընթացքում պարզվել է, որ Գավրիլ Հայկազի Թոխունցը ազգությամբ հայ է, տիրապետում է հայերեն բանավոր լեզվին, սակայն հայերեն գրավոր լեզվին չի տիրապետում, պատշաճ կերպով տիրապետում է ռուսերեն լեզվին, ռուսի անհրաժեշտ է հնարավորություն ընձեռնել նրան թարգմանչի օգնությամբ իրականացնել քրեդատավարական օրենքով սահմանված իր իրավունքները և պարտականությունները:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի, 15-րդ, 55-րդ և 83-րդ հոդվածների պահանջներով,

Ո Ր Ո Շ Ե Ց Ի՝


1. Վարույթի թիվ 60172818 քրեական գործով որպես թարգմանիչ ներգրավել «Վի Գրուպ» ՍՊԸ-ի թարգմանիչ՝ Վահագն Մերուժանի Ղազարյանին և վերջինիս բացատրել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածով նախատեսված թարգմանչի իրավունքները և պարտականությունները:
2. Վ.Ղազարյանին նախազգուշացնել ակնհայտ սխալ թարգմանություն կատարելու համար ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով նախատեսված քրեական պատասխանատվության մասին:

ՀԿԳ ՔՆՆԻՉ՝



Ա.ՀԱՄԶՈՅԱՆ

Ինձ պարզաբանվել են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածով նախատեսված թարգմանչի իրավունքները և պարտականությունները, որոնք ինձ պարզ են և հասկանալի՝




Վ.Մ.Ղազարյան

21.08.2018թ.

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«Քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության ՃՏԿ քննության բաժնի ՀԿԳ քննիչ, արդարադատության երրորդ դասի խորհրդական Վարդան Սարգսյան, կազմեցի սույն տեղեկանքն այն մասին, որ վարույթում քննվող թիվ 60172818 քրեական գործով «Վի Գրուպ» ՍՊ ընկերության թարգմանչուհի Տաթևիկ Գուգարի Բոջարյանը կատարել է ռուսերենից հայերեն և հակառակը բանավոր և գրավոր թարգմանություն՝ 2 ժամ 30 րոպե տևողությամբ:

ՀԿԳ քննիչ,
արդարադատության երրորդ դասի
խորհրդական՝



Վ. Սարգսյան


ՏԵՂԵԿԱՆՔ

04 հունիսի 2019թ.

ք.Երևան

Տրվում է «ՎիԳրուպ» ՍՊԸ-ի աշխատակից Վահագն Մերուժանի Ղազարյանին առ այն, որ նա ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության ՃՏՀ քննության բաժնում քննվող թիվ 60172818 քրեական գործով որպես ուսաց լեզվի թարգման մասնակցել է 7 ժամ 5 րոպե տևողությամբ բանավոր և գրավոր թարգմանություններին:

ՀԿԳ քննիչ



Ա.Համզոյան

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

ՀՀ ՔԿ Երևան քաղաքի քննչական վարչության ՃՏՀ քննության բաժնի ՀԿԳ քննիչ, արդարադատության երրորդ դասի խորհրդական Վարդան Յուրիկի Սարգսյանս, կազմեցի սույն տեղեկանքն այն մասին, որ վարույթունս քննված 60172818 քրեական գործով «ԿԻ ԳՐՈՐՊ» ՍՊ ընկերության թարգմանչուհի Տաթևիկ Գուգարքի Քոչարյանը կատարել ոռաբրենից հայերեն և հակառակը բանավոր և գրավոր թարգմանություն՝ ևս 2 ժամ 30 րոպե:

ՀԿԳ քննիչ, արդարադատության
երրորդ դասի խորհրդական՝



Վ. Յու. Սարգսյան

10.06.2019թ.

ՈՐՈՇՈՒՄ

Թարգմանիչ ներգրավելու մասին

ք.Երևան

04 ապրիլի 2019թ.

ՀՀ քննչական կոմիտեի Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի քննչական բաժնի ՀԿԳ քննիչ, առաջին դասի խորհրդական Ա.Դ.Սարգսյանս, քննարկելով թիվ 09161919 քրեական գործի նյութերը.

ՊԱՐԶԵՑԻ

2019 թվականի մարտի 13-ին ՀՀ ոստիկանության Արաբկիրի բաժնում հաղորդում է տվել Նատալիա Նիկոլայի Մանասյանն այն մասին, որ նույն օրը՝ ժամը 12:00-ի սահմաններում, Տաճատ Արթուրի Ներսիսյանը Երևան քաղաքի Պարույր Սևակ փողոցի 8 շենքի 112 բնակարանի ննջասենյակում իր դստեր՝ Աննա Արամի Մանասյանի կամքին հակառակ նրա անօգնական վիճակն օգտագործելով սեռական հարաբերություն է ունեցել վերջինիս հետ:

Դեպքի առթիվ 23.03.2019թ. ՀՀ ոստիկանության Քանաքեռ-Զեյթունի բաժնի հետաքննության բաժանմունքում ՀՀ քրեական օրենսգրքի 138-րդ հոդվածի 1-ին մասով հարուցվել է թիվ 09161919 քրեական գործը:

01.04.2019թ. քրեական գործը ստացվել է ՀՀ ՔԿ Երևան քաղաքի քննչական վարչության Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի քննչական բաժնի և կատարվում է նախաքննություն:

Պարզվել է, որ Նատալիա Մանասյանը և Աննա Մանասյանը չեն տիրապետում հայերեն գրավոր և բանավոր լեզվին, այլ ազատորեն տիրապետում է ռուսերեն գրավոր և բանավոր լեզվին:


«Վի Գրուպ» ՍՊԸ-ն որպես թարգմանիչ սույն քրեական գործով լիազորել է Արմինե Քաջիկի Մինասյանին:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 55-րդ և 83-րդ հոդվածների պահանջներով.

ՈՐՈՇԵՑԻ

Թիվ 09161919 քրեական գործով որպես թարգմանիչ ներգրավել «Վի Գրուպ» ՍՊԸ-ի կողմից լիազորված թարգմանիչ Արմինե Քաջիկի Մինասյանին /անձնագիր AF0479573/ և պարզաբանել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածը և նախազգուշացնել ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով նախատեսված պատասխանատվության մասին:


ՀԿԳ քննիչ՝



Ա.Դ.Սարգսյան

Ծանոթացա որոշման հետ:

Թարգմանիչ՝



«04» ապրիլի 2019թ.

ՏԵՂԵԿԱՆՔ

10 մայիսի 2019թ"

ք"երևան

ՀՀ ՔԿ Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի քննչական բաժնի ՀԿԳ քննիչ Ա.Դ.Սարգսյանս, կազմեցի սույն տեղեկանքն այն մասին, որ վարույթիս թիվ 09161919 քրեական գործով «ՎԻ Գրուպ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված թարգմանիչ Արմինե Քաջիկի Մինասյանը կատարել է ուսերենից հայերեն և հակառակը թարգմանություններ ընդհանուրը 16 ժամ տևողությամբ:

ՀԿԳ քննիչ՝



Ա.Դ.Սարգսյան